# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

## Համագործակցային դասը որպես արդյունավետ ուսուցման միջոց

Հետազոտող ուսուցիչ՝ Դավթյան Սոնա

Երևանի հ. 98 հիմնական դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Սրբուհի Լուլուկյան

Երևան- 2022

## Բովանդակություն

1. Ներածություն……3

2. Դասավանդողների դերը համագործակցային ուսուցմա գործընթացում…….....7

3. Համագործակցային ուսուցմա մեթոդներ…… 12

4. Ինչ տարբերակներ կարող է օգտագործել դասարանը առցանց համագործակցությամբ աշխատելու համար……..20

5. Դասի պլան…… 21

6. Եզրակացություն……24

7. Գրականություն…… 25

## Ներածություն

Համագործակցային ուսուցումն այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այս ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական փոխկապվածության ապահովումը:

Կրթության ոլորտի աշխատողներն այսօր գիտակցում են, որ ավանդական ուսուցման ձևերն այլևս անկարող են ստեղծել, զարգացնել գիտելիքներ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Ինչպես Հայաստանում, այնպես էլ ամբողջ աշխարհում, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման, ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ: Այսօր համագործակցային ուսուցումը փորձարկվում է ուսուցիչների կողմից որպես դասավանդման խնդիրների լուծման միջոցներից մեկը:

Կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Շատերն այսօր դասավանդման ընթացքում կիրառում են խմբային աշխատանք, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում հիմնական տարրերն ու մեթոդներն ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Այդ իսկ պատճառով համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասապրոցեսի ընթացքում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքն ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում:

«Ուսուցումնը համագործակցային է այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով, փոքր խմբերով աշխատում են մի ընդանուր խնդիր լուծելու, մի ընդանուր թեմա հետազոտելու, նորարարություն իրականացնելու համար»:

Այսօր համագործակցային ուսուցումը մեծ ճանաչում է ստացել աշխարհի տարբեր երկրների ուսուցիչների կողմից: Նպաստող գործոններն են՝

- ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը,
- դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,
- բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը:

Հանագործակցային ուսուցման հիմնական տարրերը ըստ Ջոնսոնների՝ հինգն են՝[1]

- դեմ առ դեմ փոխազդեցություն (խմբի անդամները համագործակցում են, ապահովում են հետադարձ կապ)
- դրական փոխկապվածություն (խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, աջակցելու մթնոլորտ: Այն նպաստում է հանդուրժողականության, վստահության ձևավորմանը )
- անհատական հաշվետվություն և պատասխանատվություն (խմբի յուրաքանչյուր անդամ կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքի համար)
- խմբային գործընթացի մշակում (խմբի անդամների հաջողությունների, համագործակցության բարելավման փուլ է)
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ (խմբի անդամների միջև ձևավորվում են վարքային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, խոսողին հետևելը):

Հետագայում Պասի Սալբերգի[2] կողմից ավելացվեց՝

- փոխներգործուն (ինտերակտիվ) առաջադրանք (խմբի անդամները հեշտությամբ մասնակցում են առաջադրանքների կատարմանը)

Խմբային աշխատանքի ամենագնահատելի հատկանիշը խմբի անդամների միջև համագործակցությունն է: Այս ուսուցման արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործոններից: Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների հետ:

[1] https://www.researchgate.net/publication/353346236_Kooperatives_Lernen_im_Unterricht
[2] https://kurier.at/wissen/bildungsexperte-pasi-sahlberg-darum-sind-finnische-schulen-top/400343833

Համագործակցության տարրերի կիրառումը նպաստում է համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար: Համագործակցային աշխատանքից էական օգուտ ստանալու պայմաններից է՝ ուրիշի տեղում իրեն պատկերացնելու կարողությունը, դիմացինի տեսակետի ըմբռնումը: Այս ամենն աշակերտին հնարավորություն է տալիս հեշտությամբ հարմարվելու կյանքի պահանջներին:

Համգործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջական դասարանն ակտիվ ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում և յուրացվում է աշակերտների միջոցով:

Համագործակցությունն ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ: Ուսուցման ընթացքում աշակերտները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությունը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ, տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:

Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար: Խմբերին
անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ, հարմարավետ զգալու համար:
Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մոտեցումը, այլ նաև աշակերտների գործողությունը և գնահատումը:
Որպես կանոն համագործակցային ուսուցումը բաղկացած է չորս փուլից՝

***<u>Սկիզբ</u>***- Անհատական աշխատանքում աշակերտները գրի են առնում իրենց առաջին մտքերը հարցերի վերաբերյալ: Դրա համար հատկացված է հստակ ժամանակ:

***<u>Համագործակցային փուլ</u>***- Խմբային աշխատանքի ընթացքում աշակերտները փոխանակում և քննարկում են իրենց նախնական գիտելիքները և լուծումների մոտեցումները:

***<u>Ներկայացում</u>***-Այստեղ խումբը ներկայացնում է իր արդյունքները և քննարկում ձեռք բերված գիտելիքները: Հնարավորության դեպքում խմբի յուրաքանչյուր անդամ ներկայացնում է աշխատանքի մի հատված:

***<u>Եզրակացություն (ավարտ)</u>***-Մտածողության փուլում ստացվում է աշակերտների հետադարձ կապ ներկայացված նյութի վերաբերյալ: Բացի այդ, թեման կարող է խորացվել ուսուցչի կողմից՝ տարաբնույթ առաջադրանքներով և հարցադրումներով:

**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Հաշվի առնելով վերջին ժամանակների բարդ սոցիալական փոփոխությունները՝համագործակցային աշխատանքը դառնում է կարևոր: Շատ երեխաներ մեծանում են դժվարին հանգամանքներում և հաճախ իրենց հետ բերում են սոցիալական վարքագծի թերություններ, որոնք կարող են շտկվել դպրոցում՝համագործակցային ուսուցման միջոցով: Աշակերտներից առաջին հերթին պահանջվում է թիմում աշխատելու կարողություն, պատասխանատվության զգացում, ինչպես նաև քննադատություն ընդունելու և որոշումներ կայացնելու կարողություն:

**Հետազոտության նպատակը:** Հատկապես լավ կազմակերպված ուսումնական խմբերում աշակերտները ձեռք են բերում ճանաչողական ոլորտում կայուն հաջողություններ: Համագործակցային ուսուցումը, նրա մեթոդների կիրառումը դասընթացի ժամանակ խթանում է թե ուսուցչի, թե աշակերտների բարձր մոտիվացիային: Մեթոդները տարբեր են ու բազմաբովանդակ. ուսուցչին հնարավորություն է տրվում դասին կիրառել այն մեթոդը, որը դասը կդարձնի լիարժեք, կապահովի աշակերտների համագործակցությունը, կգրանցի բարձր արդյունքներ:

**Հետազոտության խնդիրը:** Ձևակերպել արդյունավետ եղանակներ, որոնց օգնությամբ դասընթացները կգրանցեն բարձր արդյունավետություն, աշակերտները՝ բարձր առաջադիմություն:

## 2. Դասավանդողների դերը համագործակցային ուսուցման գործընթացում

Համագործակցային ուսուցումը նշանակում է, որ աշակերտները աջակցում են միմյանց իրենց աշխատանքում և միասին հասնում են արդյունքների: Այս մեթոդները կիրառվում են խմբային աշխատանքի ժամանակ: Լավ կազմակերպված խմբերում բազմաթիվ մեթոդական հնարներ ապահովում են սովորողների ակտիվացման բարձր մակարդակ՝ ճանաչողական ոլորտում կայուն հաջողություններով: Խնդիրների լուծման ձևերը և սոցիալական հմտությունները զարգանում են հավասարաչափ և հաճախ հանգեցնում են սովորողների ինքնահաստատման ձևավորմանը: Խմբերում հաջողված աշխատանքի հիմնական նախապայմանն աջակցող սոցիալական մթնոլորտի ստեղծումն է՝ խմբի անդամների միջև դրական փոխկապվածությամբ:

Համագործակցային ուսուցումը աշակերտներին միշտ առաջարկում է մտքեր փոխանակելու հնարավորություն՝ նախքան անհատները կամ խմբերը իրենց ուսումնասիրության նյութի, թեմայի արդյունքները կներկայացնեն ամբողջ դասարանի առջև:

Բոլոր մասնակիցները պետք է պատրաստ լինեն ներկայացնելու իրենց արդյունքները. ոչ ոք չի կարող հանգստանալ, քանի որ չկա դերերի բաշխում, և ցանկացածին կարելի է հրավիրել հարցման կամ նյութի ներկայացման: Աշխատանքի սկզբում դեռևս ոչ ոք չգիտի, թե արդյոք ով է ներկայացնելու աշխատանքի արդյունքը:

Համագործակցային ուսուցումը կենտրոնանում է սովորողների սեփական գործունեության և համագործկցության վրա որպես դասի կարևոր տարրեր: Աշակերտներին խմբերի բաժանելը թերևս դեռ չի նշանակում, որ նրանք ներկայացնում են թիմային աշխատանք:

Համագործակցային ուսուցումը ներառում է բազմաթիվ հնարքների օգտագործման հնարավորություններ՝ ենթադրելով սովորողների ինքնուրույն մտածողության լայն հեռանկարներ: Նրա ամբողջ նպատակը սովորողների տրամաբանական

մտածողության զարգացումն է, որը կրթության համակարգում կարևոր և առաջնային հարց է:

Համագործակցային ուսուցումն առավել հուզական է, և այդ պատճառով էլ այն մեծացնում է սովորողների հետաքրքրությունն ուսուցանվող նյութի նկատմամբ: Դրա առավելությունները հիմնված են լուրջ ուսումնասիրությունների և հետաքրքրությունների վրա: 1898-1989թթ. ընթացքում անցկացվել է ավելի քան 550 համեմատական հետազոտություն՝ համագործակցային, անհատական և մրցակցային ուսուցման արդյունավետությունները պարզելու նպատակով: Այդ հետազոտությունները ցույց են տալիս, որ համագործակցային ուսուցումը կիրառելի է բոլոր դասարաններում, բոլոր ուսումնական դասընթացներում՝ անկախ տնտեսական, ազգային միջավայրի առանձնահատկությունների: Նրանք առանձնացրել են երեք հիմնական արդյունք՝

ա) բարձր ատաջադիմություն և արդյունավետություն

բ) ավելի աջակցող և նվիրված հարաբերություն

գ) հոգեբանական առողջություն, բանիմացություն և ինքնարժևորման ավելի բարձր աստիճան:

Ուսուցման ընթացքում համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է՝

- դասարանում նոր համագործակցային միջավայրի ձևավորմանը
- ուսուցչի կողմից համագործակցային ուսուցման էության առավել խորն ըմբռմանը և դասի պլանավորմանը
- ուսուցման արդյունավետության գնահատմանը և արժևորմանը
- անդրադարձի ապահովմանը և խմբային աշխատանքի բարելավմանը:

Անգլիացի մանկավարժ Ամստրոնգն առաջարկում է՝ սովորողներին չտալ գիտության պատրաստի եզրակացություններ, այլ ամեն կերպ զարգացնել նրանց մտավոր ընդունակությունները, սովորեցնել համեմատել, քննարկել, անել եզրակացություն և ամփոփել այդ:

Համագործակցային ուսուցումը ներկայացված է որպես ուսուցման մի արդյունավետ մեխանիզմ, որը մարդկանց համագործության սկզբունքներով

ապրելու հնարավորություն է ընձեռում: Համագործակցությունը խթանում է առաջադիմությունը:

Հոգեբանների հետազոտությունները ցույց են տալիս, որ պրպտողական խնդիրների լուծումը այս կամ այն ուսումնական առարկայի գիտելիքների համակարգի տիրապետման միջոցներից մեկն է և նպաստում է ճանաչողական ինքնուրույնության և ստեղծագործական մտածողության զարգացմանը: Ուստի նպատակահարմար է հենց ցածր դասարանից ուսուցման գործընթացում մտցնել ճանաչողական խնդիրներ և սովորեցնել դրանք ինքնուրույնաբար լուծել: Սովորողներն իրենց առավել ազատ և անկաշկանդ են զգում փոքր համագործակցային խմբերում աշխատելիս, որտեղ ստանում են ինքնադրսևորման լայն հնարավորություն: Նրանք համատեղ ջանքերով առավել հեշտությամբ են ընկալում նոր նյութը՝ հայտնագործելով գիտելիքներ և կիրառելով այն:

Նորզելանդացի կրթական ոլորտի մասնագետ, մանկավարժ Ջոն Հաթթին[3] 2009թ.-ին ներկայացրեց մի ուսումնասիրություն, որտեղ նա տալիս է հետևյալ հարցերը. ի՞նչն է իրականում հանգեցնում ուսման հաջողությանը, ի՞նչն է վնասում ուսման հաջողությանը: Այս հարցերին պատասխանելու համար նա ուսումնասիրել, վերլուծել է աշխարհի ավելի քան 50 000 մանկավարժական ուսումնասիրություն: Արդյունքում դասավանդման գործընթացի յուրաքանչյուր մանրուք օգնում է ուսումնառությանը, սակայն, դասարանի մթնոլորտն ու հետադարձ կապի որակը, հաջողության գրավականը ուսուցչի դերն է աշակերտների հետ: Ուսուցման ռազմավարություններն ու մեթոդական գործընթացները, որոնք կիրառվում են դասի ընթացքում ազդում են ուսման հաջողության վրա: Աշակերտների քանակը այս դեպքում այդքան էլ կարևոր չէ:

Հաթթիի ուսուցումը ցույց է տալիս՝ուսուցիչը հանդիսանում է կարևոր գործոն սովորողի մոտիվացիայի և հաջողության համար:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն ուսուցիչը, որը միշտ նստած է մնում սեղանի մոտ կամ մեկընդմերթ է մոտենում գրատախտակին, ընկալվում է որպես «հեռահար» ուսուցիչ, քան այն ուսուցիչը, որը շրջում է դասարանում, մոտենում է առանձին սովորողների, խմբային աշխատանքների ժամանակ պատասխանում հարցերին: Այսպիսով՝ ուսուցիչն ապահովում է աշակերտների ակտիվ գործունեությունը խմբային աշխատանքների ժամանակ:

[3] https://www.hpswetzikon.ch/downloads/Lernen-sichtbar-machen.pdf

Խմբային աշխատանք իրականացնելու համար դասարանը բաժանվում է խմբերի: Խմբերը չեն կատարում միևնույն աշխատանքը, այլ աշխատում են տարբեր աշխատանքային հանձնարարություններ իրականացնելու ուղղությամբ, խոսքը գնում է համատեղ խմբային աշխատանքի մասին: Սովորողներն ինքնուրույն են աշխատում և ապահովում իրենց հանձնարարված աշխատանքի արդյունքը: Խմբային աշխատանքի հաջողության հիմնական պահանջն է վստահությունը դեպի ուսուցիչ:

Շատ ուսուցիչների համար անբացատրելի է մնում այն, թե որն է իրենց դերը խմբային աշխատանքի փուլում. արդյոք նրանք պետք է մոտենան աշխատող խմբերին, թե պետք է մնան ուսուցչի սեղանի մոտ, արդյոք ճիշտ է աշակերտների հետ խոսելը, քննարկելը, հարցերին պատասխանելը:

Մոտեցումները տարբեր են: Ահա որոշ մտքեր քննարկման գործընթացից՝

- Ես սիրում եմ խմբակային աշխատանքը, այն միակ հնարավորությունն է՝ հասնել սովորողների բանավոր խոսքի զարգացման:
- Խմբային աշխատանքի ժամանակ առաջադրանքները կարող են բաժանվել տարբեր տիպերի, շատ աշխատատար է, սակայն, իմ աշակերտները սիրում են այդպիսի առաջադրանքներ և շատ ակտիվ մասնակցություն են ունենում:
- Խմբային աշխատանքը դժվար է կազմակերպել. ես նույնիսկ վստահ չեմ կարող լինել, թե արդյոք բոլորն են հասնում ցանկալի արդյունքի:
- Խմբային աշխատանքի ժամանակ մասնակիցներն ավելի շատ կիրառում են մայրենի լեզուն, այդ իսկ պատճառով չեն սովորում օտար լեզուն:

Որպեսզի խմբային աշխատանքի ժամանակ մասնակիցների միջև տեղի ունենա համագործակցային ուսուցում, խրախուսելի է աշխատանքը սկսելուց առաջ որոշել խմբի մասնակիցների հստակ դերերը: Դրանք որոշելու համար հաշվի է առնվում սովորողների անհատական հատկանիշները, այդ թվում առիթ է հանդիսանում այն փաստը, որ առաջադիմությամբ աչքի ընկնողները համագործակցային ուսուցման ժամանակ կարող են խեկավարել խմբային քննարկումը:

Համագործակցային ուսուցման ընթացքում շատ կարևոր է խմբերի մեծությունը: Առավել արդյունավետ են համարվում 4-5 հոգուց բաղկացած խմբերը: Այսպիսի խմբերում աշակերտները դրսևորում են առավել մեծ ակտիվություն: Փոքր խմբերում կարևորվում է յուրաքանչյուր աշակերտի անհատական պատասխանատվությունը,

միաժամանակ ձևավորվում է կոլեկտիվ աշխատանքի մթնոլորտ: Աշակերտն ավելի լավ է սովորում, երբ ակտիվ մասնակցում է գործընթացին:

Փոքր խմբերով աշխատելն ունի հետևյալ նպատակը՝

- ձևավորում է հաղորդակցման հմտություն
- աշակերտները սովորում են միմյանցից
- միմյանց հաշվետու լինելու հատկությունը խմբի ընդհանուր հաջողություն ապահովելու հարցում
- խթանում է թիմային աշխատանքը
- ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար
- ընձեռում է ակտիվ մասնակցություն և ինքնադրսևորման հնարավորություն:

## 3. Համագործակցային ուսուցման մեթոդներ

Համագործակցային ուսուցումն աշակերտների ուսուցումն ու փոխկապվածությունն ուժեղացնելու համար փոքր խմբերի օգտագործման կազմակերպված և կառուցվածքային եղանակն է:

Ստորև ներկայացվում են են մի քանի մեթոդներ և հնարներ՝

- **Speed dating(Արագ ժամադրություն)**

  Աշակերտները երկու շարքով նստում են միմյանց դիմաց, տրվում է թեման, աշակերտները 1-2 րոպե ժամանակ են ունենում թեմայի շուրջ քննարկումներ ունենալու, այնուհետև հնչում է զանգը, և շարքերից մեկը շարժվում է դեպի աջ, իսկ մյուս շարքը մնում է տեղում: Դեպի աջ տեղափոխված վերջին աշակերտը գալիս և նստում է առաջին տեղում: Այսպես՝ ամեն անգամ՝ զանգը հնչելուն պես աշակերտների շարքը շարժվում է ձախից աջ, այնքան, մինչև բոլորը գան և նստեն առաջին տեղում:

  Օր.՝Առաջադրանք

  «Երթևեկության միջոցների առավելություններն ու թերությունները»(„Vorteile und Nachteile von Vehrkehrsmitteln“ )

  (Diskutieren Sie mit jedem Partner zum Thema)

  - Sammeln Sie möglichst viele Ideen.
  - Notieren Sie die Ideen auf Ihre Karten.
  - Markieren Sie, wer die besten Ideen hatte.

- **World Ca´fe(Համաշխարհային սրճարան)**

Դաս վարողը ներկայացնում է այն թեմաները, որոնց շուրջ պետք է տեղի ունենա քննարկում: Մասնակիցները պատահական սկզբունքով բաժանվում են խմբերի, նստում սեղանների շուրջ, որտեղ դրված են քննարկման համար նախատեսված թղթեր և գրիչներ: Մասնակիցների թիվը կարող է լինել 4-5 հոգի: Յուրաքանչյուր

խումբ ունենում է իր ղեկավարը, որն իր մոտ ունենում է տվյալ թիմի հարցադրումները: Մասնակիցները թեմայի շուրջ գրում են իրենց տեսակետները, կարծիքները, գիտելիքները, ապա տեղի է ունենում կարճ քննարկում: Քննարկման վերջում ղեկավարը իմի է բերում արդյունքները: Թեմայի քննարկումից հետո խմբի մասնակիցները տեղափոխվում են մյուս սեղանի մոտ, նրանց ներկայացվում է մյուս սեղանի քննարկման թեման: Քննարկված թեմայի արդյունքները հավաքվում են, և տեղի է ունենում մեկ ընդհանրական քննարկում: Քննարկման վերջում թիմերը ներկայացնում են իրենց արդյունքները:

- **Partner- Interview (Զույգերով հարցազրույց)**

Այս մեթոդի միջոցով աշակերտները ծանոթանում են միմյանց: Հնարավորություն է տրվում միաժամանակ դասավանդողին տեղեկություններ ստանալ խմբերի մասին: Հարցազրույցի թեմաները կամ հարցադրումները գրվում են գրատախտակին կամ բաժանվում թերթիկների միջոցով:

Հարցազրույցի համար տրվում է հինգից տասը րոպե ժամանակ: Ցանկալի է, որ զույգերը նախապես քիչ տեղեկություններ իմանան միմյանց մասին: Այնուհետեև մասնակիցները ներկայացնում են վերջնարդյունքները:

- **Dreieck der Gemeinsamkeiten(Ընդհանրական եռանկյուն)**

Մեթոդի նպատակն է ծանոթանալ միմյանց, վերավնել կաշկանդվածությունը և զարգացնել, ձևավորել խմբային դրական մթնոլորտ: Կազմվում են երեք խմբեր, յուրաքանխյուր խմբին հանձնարարվում է թղթի վրա մեծ եռանկյուն նկարել՝ անկյուններում գրելով մասնակիցների անունները: Զրույցի ընթացքում վեր են հանվում նմանությունները: Եթե միևնույն ընդհանրությունները հայտնաբերվում են երկու մասնակիցների միջև, դրանք գրվում են երկու անունների միջև, եթե նմանությունները երեքի մոտ են, դրանք գրվում են եռանկյան մեջ: Հավանականությունը մեծ է, որ մասնակիցներն ունենան առանձնահատկություններ, որոնք բնորոշ են միայն իրենց. այդ դեպքում դրանք գրվում են միայն տվյալ անվան դիմաց, ապա ներկայացվում են խմբային աշխատանքի արդյունքները:

- **Think-Pair-Share (Մտածել, զույգ կազմել)**

Մասնակիցները ստանում են հանձնարարություն, սկզբում առանձին և կարճ (Think-մոտ 2ր), ապա երկուսով կամ երեքով (˜3 ր) արտահայտում մտքեր տրված թեմայի շուրջ: Քննարկման արդյունքները կարճ տարբերակով գրի են առնվում: Այնուհետև արդյունքներով կիսվում են ընդհանուր դասարանի համար(Share): Մեթոդը ծառայում է փոխանակվող մտքերի, պահանջների ակտիվ զարգացման համար:

- **Gruppenpuzzle/ Jigsaw(Խճանկար)**

Համագործակցային ուսուցման մեթոդ է, որի կիրառության ժամանակ աշակերտները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, որոշակի դրույթների, որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում իրենց ընկերներին: Այս մեթոդի կիրառման ժամանակ աշակերտները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առաննձին ուղղություններով: Բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում են և դառնում ամբողջական արդյունք: Նյութն ուսումնասիրվում է հատվածաբար, ապա պատկերն ամբողջանում է, երբ խմբային աշխատանքների արդյունքները միավորվում են : Մեթոդի հատկանիշներից կարևորն այն է, որ սովորողները մեծ պատասխանատվություն են կրում միմյանց ուսումնառության համար, հանդես են գալիս և սովորողի, և սովորողների դերերում:

Մեթոդի նպատակները՝

- նպաստել առաջադրված նյութը տարբեր կողմերից ուսումնասիրելուն
- նույն նյութի մասին տարբեր աղբյուրներ ուսումնասիրելու հնարավորություն ընձեռնել
- ընկերների հետ համագործակցելով՝ օգնել գտնելու առաջադրված հարցերի պատասխանները
- հնարավորություն ստեղծել միաժամանակ դառնալու և սովորող և սովորեցնող
- նոր նյութը յուրացնել արդեն դասարանում:

- **Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ**

Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Միջին և բարձր առաջադիմությամբ

աշակերտները պետք է մի կողմից օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից կարողանան պահպանել, բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելությունն այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտներին, և՛ խմբերին:

- **Երեք բանալի և մեկ կողպեք**

Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբերով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների միջև ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

- **Համագործակցություն, հակամարտություն, համակեցություն**

Ուսուցիչը դասարանից դասարանից դուրս է ուղարկում երեք սովորողների՝ չասելով՝ ինչու: Դասարանին ներկայացնում է դասի թեմայի հետ կապված որևէ պատկեր, ապա դրսի երեխաներից մեկը ներս է գալիս, 15վայրկյան նայում նկարը, որից հետո իր տեսածը ներկայացնում է երկրորդին, վերջինս էլ՝ երրորդին, ով դասարանին պատմում է՝ ինչի մասին է խոսքը: Դասարանին երրորդ մասնակցի պատմածը էականորեն տարբերվում է նրանց տեսածից, որից հետո կազմակերպվում է քննարկում- վերլուծություն;

Երեխաները հասկանում են, որ հաղորդակցությունը շատ կարևոր է հասարակական հարաբերություններում: Ճիշտ հաղորդակցությունը նպաստում է համագործակցությանը. ոչ ճիշտ հաղորդակցությունը կարող է հանգեցնել հակասությունների:

- **Ինձնից առաջ հարցրու երեք հոգու**

Այս հնարի իմաստ այն է, որ աշակերտները սովորեն նաև միմյանցից: Ուսուցիչն առաջարկում է աշակերտներին, որ տարբեր հարցերով դիմեն իրենց դասընկերներին և իրեն դիմեն միայն այն դեպքում, եթե երեք աշակերտի դիմելուց հետո չեն ստացել հարցի պատասխանը:

- **Կենտրոնների աշխատանք**

Ստեղծվում են 4-5 հոգուց բաղկացած խմբեր: Խմբերը ստանում են տեքստը և մոտենում համապատասխան անուններով կենտրոններին: Խմբերում մասնակիցների ներգրավումը և խմբերին հանապատասխան կենտրոն ուղղորդելը կարող է լինել ինչպես նպատակային համագործակցություն, որոշակի աշխատանքում կարողությունների և հմտությունների խորացում, այնպես էլ պատահականության սկզբունքով:

Կենտրոններ

- հետազոտությունների կենտրոն
- ստեղծագործողների կենտրոն
- գրավոր աշխատանքի կենտրոն
- բացահայտողների կենտրոն:

Ուսուցիչը կարող է իր հայեցողությամբ ավելացնել կամ պակասեցնել կենտրոնների թիվը՝ փոխելով կամ հարմարեցնելով անունները:

**Բացահայտողների կենտրոն**

Այս կենտրոնում աշխատողներն ընթերցում են տեքստը, կատարում նշումներ, վեր հանում վերջինիս հիմնական միտքը, ենթատեքստը և ներկայացնում ընկերներին:

**Հետազոտությունների կենտրոն**

Այս կենտրոնում աշխատողներն ընթերցում են տեքստը և, օգտվելով այդ պահին ձեռքի տակ եղած աղբյուրներից (համացանց, գրականություն), փորձում են լրացուցիչ հետաքրքիր նյութեր հայթայթել տեքստի վերաբերյալ:

**Ստեղծագործողների կենտրոն**

Մասնակիցները, տեքստի առանձնահատկություններից ելնելով, փորձում են այն որևէ կերպ վերարտադրել և ներկայացնել, օրինակ՝ բեմականացում, պաստառի պատրաստում, նկարազարդում և այլն:

**Գրավոր աշխատանքի կենտրոն**

Այս հնարքի միջոցով աշակերտներն ընթերցում են տեքստը և իրականացնում լեզվական կամ բառային աշխատանք՝ ըստ պահանջի:

Ուսումնական նյութը մատչելի դարձնելուն շատ են օգնում դիդակտիկ պարագաները և նյութերը՝ այն ամենը, ինչն ակադեմիական կրթությունը մոտեցնում է կյանքին:

Յուրաքանչյուր կենտրոնում աշխատանքի համար սովորողներին տրվում է որոշակի ժամանակ՝ կախված տեքստի ծավալից, սովորողների քանակից և պատրաստվածությունից: Աշխատանքի ավարտին խմբերը միմյանց են ներկայացնում աշխատանքները:

- **Գուշակություն**

Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հատկությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կտրատել առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղում: Դասն սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը: Օր՝. կարող եք առանձին թղթիկների վրա գրել՝ „**Deutsch**“, „**Österreich**“ „**die Schweiz**“, „**Sprache**“ բառերը և աշակերտներին առաջարկել գտնել այն հասկացությունը, որը միավորում է այս բառերը: Պատասխանն է՝ **DACH.**

- **(Domino) Գիտելիքի դոմինո**

Սովորողները նստում են մեծ սեղանի շուրջ:

Քայլ 1.-Բոլոր սովորողներն ստանում են առնվազն մեկ քարտ՝ կախված թեման ամփոփող հարցերի քանակից և սովորողների թվից:

Քայլ 2.-Ուսուցչի հրահանգով սովորողներից մեկը իր մոտ գտնվող քարտի հարցը կարդում է և դնում է սեղանի վրա:

Քայլ 3.-Հնչած հարցի պատասխանն ունեցողն ասում է պատասխանը և իր քարտը դնում սեղանին՝ նախորդ քարտի հարցի շարունակությամբ ու կարդում իր քարտի հարցը:

Քայլ 4.-Հաջորդաբար շրջանաձև դրվում են բոլոր քարտերը:

Քայլ 5.-Ավարտին շրջում են բոլոր քարտերը, և ճիշտ դասավորվածության պարագայում քարտերի դարձերեսին երևում է թեմայի կարևոր հասկացությունը կամ միտքը:

Քայլ 6.- 2-3 աշակերտներ արտահայտում են վերջնական մտքի վերաբերյալ սեփական մոտեցումները:

- **Zickzack-Dialog(Զիգզագային երկխոսություն)**

Զիգզագային երկխոսությունն օտար լեզուների ուսուցման մեջ բանավոր փոխազդեցության համագործակցային ուսուցման ձև է: Այն հարմար է երկխոսություն ձևավորելու համար: Այս մեթոդն իր դրական ազդեցությունն է թողնում և ոչ ակտիվ աշակերտներին ներգրավելու գործում:

Դասի գաղափար- Դասարանին որպես առաջադրանք քննարկման նյութ՝

Օր.՝ «Դուք տեղափոխվել եք և ծանոթանում, ներկայանում եք ձեր հարևանին»: Դասարանը բաժանվում է երկու հավասար խմբերի՝ (Ա և Բ): Խմբի անդամները նստում կամ կանգնում են երկու շարքով՝դեմ առ դեմ: Այժմ յուրաքանչյուր խումբ իր դերն է ստանձնում երկխոսության մեջ: Օր.՝ «Ա» խումբը «Դու»- ն է, իսկ «Բ» խումբը ձեր հարևանը: «Ա» խմբի առաջին աշակերտը («Ա1») սկսում է երկխոսությունը, «Բ» խմբի առաջին աշակերտը («Բ1») արձագանքում է «Ա1»-ի հարցադրմանը: «Ա2» արձագանքում է «Բ1» -ի հայտարարությանը, այնուհետև «Բ2»-ը «Ա2»-ին և այսպես շարունակ: «Բ» խումբի վերջին աշակերտի արձագանքին պատասխանում է կրկին «Ա» խմբի առաջին աշակերտը: Ուսուցիչը քիչ ուշադրություն է դարձնում լեզվական, քերականական սխալների վրա: Այստեղ կարևոր է՝աշակերտի մնալն իր դերի մեջ:

Համագործակցային ուսուցման թերևս նորամուծություններից է «Համագործակցային գրավոր աշխատանքը»: Համագործակցային գրավոր աշխատանքը նպատակ ունի համախմբելու մի քանի աշակերտների, ովքեր, աշխատելով միևնույն գաղափարի շուրջ, ստեղծում են միասնական հոդված, տեքստ: Այս մեթոդը հատկապես հետաքրքիր է լեզվական տեսանկյունից: Գործընթացի ժամանակ աշակերտները կարող են ուսուցիչներին ներկայացնել տեքստային նախագծերը այն կարդալու, մեկնաբանելու, ստուգելու համար: Համագործակցային գրավոր աշխատանքի մեջ մի քանի մասնակիցներ միասին և միաժամանակ անցնում են տեքստի պլանավորման, ձևակերպման և վերանայման

գործընթաց: Նախքան տեքստի գրավոր հատվածին անցնելը, աշակերտները կազմում են նպատակային հարցադրումներ. «Ի՞նչ եմ գրում», « Ինչու՞ եմ գրում, ու՞մ եմ գրում», «Ինչպիսի՞ կառուցվածք, ձևակերպում ունի իմ տեքստը»: Միասին համագործակցող աշակերտները համատեղ պատասխանատվություն են կրում արդյունքի համար:

Բազմաթիվ ուսումնասիրություններ ԱՄՆ-ում (Richards/Lockhart 1994) և Գերմանիայում (DESI-Studie 2006) ցույց են տալիս, որ օտար լեզվի դասընթացների ժամանակ, խոսքի մասնաբաժինը շատ փոքր մասն է կազմում: Ժամանակի մեծ մասը խոսում են ուսուցիչները: Նրանք օգտագործում են ժամանակը՝ բացատրելու վարժություններն ու առաջադրանքները, քերականությունն ու նոր բառապաշարը կամ ստուգելու հանձնարարված աշխատանքները: Առանձին աշակերտներ դասի ընթացքում փոխանակում են 1-2 բառ: Օտար լեզուների դասավանդման համար կարևոր նախապայման է՝ ինչպես սովորողներին հնարավորություն տալ ժամանակի մեջ ցույց տալ իր լեզվական կարողությունները

## 4. Ինչ տարբերակներ կարող է օգտագործել դասարանը առցանց համագործակցությամբ աշխատելու համար

Ամպային մատակարարների շնորհիվ այսօր կան նաև առցանց համագործակցային մի շարք տարբերակներ: Ուսուցիչը նախապես պետք է պարզաբանի, թե որ ծրագրերն են թույլատրվում իրենց դպրոցում:

Առցանց ուսուցման մի քանի օրինակներ՝

- **Ein Wiki ( Վիքի) -** Աշակերտները բրաուզերներում (դիտարկիչ) ստեղծում են նոր գրառումներ և կարողանում են ինքնուրույն աշխատել նույն վիքի մուտքի վրա: Յուրաքանչյուր փոփոխություն գրանցվում է: Այսպիսով ստեղծվում է գիտելիքների ընդհանուր պաշար:
- **Etherpad (Եթերի պահոց) -** Այս տեքստային փաստաթղթում աշակերտները կարող են միաժամանակ գրել բրաուզերներում (դիտարկիչ): Փոփոխություններն ընդգծված են գույներով: Կան զրուցարաններ պայմանավորվածություններ ձեռք բերելու համար:
- **Fotoalbum (Ֆոտոալբոմ)-** Այն կարող է օգտագործվել համատեղ լուսանկարների արխիվներ ստեղծելու և համօգտագործման համար, որտեղ յուրաքանչյուր աշակերտ կարող է ներկայացնել իր նկարները:
- **Video-Tutorial (Տեսադասընթաց)-** Երկու կամ մի քանի աշակերտներ կարող են օգտագործել տեսագրությունը քննարկելու թեման և փաստաթղթավորելու իրենց մտքերն ու բացատրությունները մյուսների համար:

- **Mindmap (Մտքի քարտեզ)-** Մտքի քարտեզի օգնությամբ աշակերտները կարող են պարզ կերպով դասավորել և կապել տեղեկատվությունը:

## 5. Համագործակցային ուսուցման դասի պլան

Դասարան՝ VIII

Առարկան՝ Գերմաներեն

Աշակերտների քանակը՝ 24

Տևողությունը՝ 45ր

Դասի տիպը՝ խառը

Օգտագործվող մեթոդներ՝ «Խճանկար», «Մտագրոհ»

Դասի թեման՝ «Հուշանվերներ Եվրոպայից»

*Նպատակը՝* ա)Ուսումնական Աշակերտները փոքր խմբերով կքննարկեն եվրոպական երկրների նմանությունները, առանձնահատկությունները, աշխարհագրական դիրքը, լեզուները, ինչպես նաև կկատարեն աշխատանք՝ զարգացնելով համագործակցային կարողությունները:

բ)Դաստիարակչական- Կիմանան մշակութային առանձնահատկությունների մասին, համեմատականներ կանցկացվեն երկրների միջև: Կսովորեն եվրոպական ժողովուրդների պատմական փուլերը:

*Արժեքային համակարգ-* Կզարգանա աշխարհընկալումը, հետաքրքրությունները դեպի այլ երկրներ, գեղեցիկի ընկալումը:

*Հմտությունների զարգացում*- Խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին գրանցել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց:

*Դասարանի կահավորումը*- Յուրաքանչյուր խումբ պետք է նստի մեկ սեղանի շուրջ, որտեղ դրված կլինեն անհրաժեշտ միջոցները՝ գրիչներ, թղթեր, գունավոր մատիտներ և այլն: Սահիկաշարով ցուցադրված կլինի Եվրոպա աշխարհամասը, Եվրոմիության դրոշը:

*Հաջողության չափանիշ* – Խմբի բոլոր աշակերտները պետք է կարողանան բացատրել իրենց թեման, հստակ պատասխանեն իրենց ուղղված հարցերին:

*Վերահսկում, միջամտում*- Մոտենալ խմբերին, պատասխանել այն հարցերին, որոնք առաջացել են խմբի անդամների մոտ:

*Առաջադրանքի ներկայացում*- Առաջադրանքի արդյունքները ներկայացվում են խմբի անդամների կողմից:

*Գնահատում*- Խմբի անդամներին գնահատում են խմբի անդամները, առավել ակտիվները խրախուսվում են և գնահատվում էլ. մատյանում:

*Դասի ընթացք*- Աշակերտները նախօրոք բաժանվում են 4 խմբերի: Յուրաքանչյուր խումբ ընտրում է իր համար նախընտրելի անվանում: Սահիկաշարի վրա ցուցադրվում է «Ճամփորդել, ճանաչել Եվրոպան»(„Reisen, Europa kennenlernen“): Աշակերտները, կիրառելով «Մտագրոհ» մեթոդը, փորձում են հասկանալ, գրում են կարծիքներ ցուցադրված վերնագրի շուրջ: Յուրաքանչյուր խմբի սեղանին դրված է թեմայի այն հատվածը, որի շուրջ նրանք պետք է աշխատեն: Աշակերտները տեղեկացվում են նաև աշխատանքի համար հատկացված ժամանակի մասին:

**Առաջին խումբ**. տրվում է « Եվրոպական երկրներ» (Europäische Länder) հատվածը: Աշակերտները պետք է գերմաներենով ներկայացնեն երկրները, ճիշտ արտասանեն և գրագետ գրեն դրանք, քարտեզի վրա ցույց տան առավել հայտնի երկրները, վերհիշեն Եվրոմիության անդամ երկրներից 5-6 երկիր:

**Երկրորդ խումբ**. տրվում է «Գերմանախոս երկրներ» (Deutschsprachige Länder) հատվածը: Հանձնարարվում է ներկայացնել DACH երկրները, մայրաքաղաքները, նախօրօք տրված քարտեզի վրա գունավորել դրանք: Վեր հանել այդ երկրների

նմանությունները և տարբերությունները, բնորոշ հուշանվերները, որոնք կարելի է ներկայացնել որպես երկրի խորհրդանիշ:

**Երրորդ խումբ.** հանձնարարվում է « Հուշանվերներ» („Souveniers“) հատվածը: Պետք է ստուգաբանել եզրույթը, նախօրոք սեղանին դրված թղթի վրա գրված „MITBRINGSEL“ գերմաներեն բառը բաժանել երեք առանձին բառերի և բացատրել դրանց իմաստները:(MIT-, BRINGEN-NEHMEN): «Մտագրոհ» մեթոդի միջոցով պետք է թղթի վրա ներկայացնեն հուշանվերներ, որոնք ճամբորդությունից կվերցնեին իրենց հետ:

**Չորրորդ խումբ**. տրվում է «Մենք զբոսաշրջիկներ են» („Wir sind Europatouristen“) հատվածը: Նախօրոք սեղանին դրված նկարներից, արձանիկներից աշակերտները պետք է առանձնացնեն այն հուշանվերները, որոնք նրանք կգնեին եվրոպական պարբեր երկրներից: Միաժամանակ պետք է փորձեն բացատրել՝ ինչու են ընտրում այդ հուշանվերները :

Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքը: Դասի թեման կամբողջացնեն՝լրացումներ կատարելով:

*Դասի ամփոփում.* կազմակերպվում է խաղ-վիկտորինա սահիկաշարի օգնությամբ՝ ՝“Souvenirs aus den DACH Ländern“(Richtig oder Falsch?): Վերջում կկատարվի գնահատում:

## 6. Եզրակացություն

Այսօր ուսումնառության գործընթացում բազում հնարավորություններ է տրվում ուսուցչին՝ իրագործելու, նպատակային դարձնելու իրեն վստահված աշխատանքը: Ուսուցիչն ինքն է ղեկավարում այն նավը, որի մեջ նստած է մի ամբողջ սերունդ: Այդ սերունդն այսօր ձգտում է այնպիսի ուսուցման, որն անգամ ուսուցչին է մղում ինքնակրթվելու, հայթայթելու նոր մեթոդներ և միջոցներ: Ուսուցչի արդյունավետ աշխատանքի գրավականն ուսուցման բազմազան, ինքնատիպ միջոցների ու մեթոդների տիրապետումն է:

Համագործակցային ուսուցումն ապահովում է մեծ առաջընթաց ուսուցման գործընթացում: Այսօր համագործակցային ուսուցումը մեծ ճանաչում է ձեռք բերել ամբողջ աշխարհում: Այն ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ: Ուսուցման ընթացքում մեծ նշանակություն է ստանում հասարակական գործառույթը: Ուսուցման ընթացքում աշակերտները միտված են օգնելու, լսելու, գնահատելու, կարևորելու միմյանց և յուրաքանչյուրի աշխատանքը: Այսօր աշակերտներին անհրաժեշտություն կա տրամադրել այն հմտությունները, որոնք անհրաժեշտ են նրանց անընդհատ զարգացող աշխատանքային աշխարհում նավարկելու համար: Այդ իսկ պատճառով դպրոցը որպես ուսուցման վայր, պետք է ճկուն գտնվի և համընթաց քայլի այսօրվա կյանքի պահանջներին: Աշակերտներին պետք է տրվեն այն հմտությունները, որոնք անհրաժեշտ են վերոհիշյալ պահանջները բավարարելու համար: Դասերը պետք է իրականացվեն «համագործակցային ուսուցում» հասկացության համաձայն: Նպատակը պետք է լինի հիմք ստեղծել ուսուցման-ուսումնառության գործընթացում աշակերտների մասնակցության համար և հասնել հետագա զարգացման խմբային աշխատանքի առումով, որտեղ սովորելու

դժվարություններ ունեցող աշակերտները սովորում են ավելի ուժեղ հմտություններ ունեցող աշակերտների հետ:

Համագործակցելու զգացումը հնարավորություն է տալիս խմբի անդամներին արդյունավետորեն լուծել և յուրացնել իրենց առջև դրված խնդիրները:

## 7. Գրականություն


- Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006
- «Ուսուցման արդյունավետ հնարներ» , Ս. Խաչատրյան , Հայաստան 2020
- „Lehrkompetenz und Unterrichtsgestaltung“/ Michael Schart, Michael Legutke, Klett-Langenscheidt, München
- Aufgaben, Übungen, Interaktion/ Hermann Funk, Christina Kuhn, Klett-Langenscheidt, München
- Lehrmaterialen und Medien/Dietmar Rösler, Nicola Würffel, Klett-Langenscheidt, München
- Aktivierende Methoden für Seminare und Übungen/Justus-Liebeg-Universität Giessen
- https://deutsch-lernen.zum.de/wiki/Kooperatives_Lernen
- https://www.grin.com/document/499712
- https://www.schulentwicklung.nrw.de/cms/methodensammlung/methodensammlung/index.html/liste.php
- https://m.hausarbeiten.de/document/75684
- https://deutsch-lernen.zum.de/wiki/Methoden_im_%C3%9Cberblick